№ 68 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 13 **1896** ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 13 № 68

ՔՍԱՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 բուբլի, կէս տարվանը 6 բուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառն 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

WIEN 62 BESTELL-NR. 4.7.96 NR-2 ZEITUNGS-STEMPEL

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

„ՄՇԱԿ"

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆը

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը՝ թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 բուբլի, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ր., ինն և ութ ամսվանը՝ 8 ր., եօթ ամսվանը՝ 7 ր., վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր., ամսական 1 բուբլի։

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԹՄԲԱԳՐԱՏԱՆՈՒՄ։

Օտարաքաղաքացիները պէտք է դիմեն հետեւեալ հասցէով՝ Тифлисъ. Редакція «МШАКЪ»։ Իսկ արտասահմանից՝ Tiflis. Rédaction «MSCHAK»։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պետական օպպոզիտիւնիստներ. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մեր գաւառական գործերը. Հայոց թատրոն. Մատենագրութիւն. Երաժշտութիւն. Նամակ Ալէքսանդրոպոլից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Նամակ Թիւրքիայից. Նամակ Ամերիկայից. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՕՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. —ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Թիւրքիայից.

ՊԵՏԱԿԱՆ ՕՊՊՈԶԻՏԻՒՆԻՍՏՆԵՐ

Մեր ժամանակը՝ օպպոզիտիւնիստների ժամանակ է։ Լօրդ Սոլսբիւրի, կոմս Գոլուխովսկի, իշխան Բիսմարկ՝ բացառական տիպեր չեն։ Դրանք ժամանակակից պետական գործողների ընդհանուր տիպի բնական ներկայացուցիչներ են։ Կը հեռանան ասպարէզից Սոլսբիւրի և Գոլուխովսկի, նրանց տեղը կը բռնեն նոր Սոլսբիւրիներ, նոր Գոլուխովսկիներ, տարբեր միմիայն իրանց անուններով, բայց ոչ ուղղութեամբ, ճիշդ այնպէս, ինչպէս լօրդ Բիկոնսֆիլդին յաջորդեց լօրդ Սոլսբիւրի, կոմս Կալնոկին՝ կոմս Գոլուխովսկի, իշխան Բիսմարկին՝ իշխան Հոհենլոհէ, սինիոր Կրիսպիին՝ սինիոր Ռուդինի։

Ժամանակակից պետական մարդկանց ամբողջ ուղղութիւնը՝ զուտ օպպոզիտիւնիստական է։ Սրանից 20 տարի առաջ լօրդ Սոլսբիւրի, ջերմ պաշտպան հանդիսանալով Թիւրքաց կառավարութեան, լսել անդամ չէր ուզում արևելեան քրիստոնեաների՝ բուլգարների, հայերի, յոյների դառն աղաղակները և սրտագին աղերսանքները. այսօր նոյն Սոլսբիւրին՝ իբրև ջերմ պաշտպան արևելեան քրիստոնեաների՝ Թիւրքիայի կործանումն է պահանջում։ Մի քանի ամիս առաջ կոմս Գոլուխովսկի հրաւէր էր կարդում Եւրոպային նաւեր ուղարկելու Բոսֆոր՝ ռմբակոծելու Եըլդըզ-Քիօսքը, այսօր նոյն Գոլուխովսկի արևելեան քրիստոնեաների բաղդը Թիւրքաց կառավարութեան, այդ քայքայված դիակի „կենսունակութեան" մէջ է տեսնում։ Նոյնն են անում և նրանց ընկերակիցները, մի Կրիսպի, մի Անսաո, մի Ռուդինի, Բիսմարկեան շիջելի այդ արժանաւոր աշակերտները, օպպոզիտիւնիզմի այդ փառաւոր ներկայացուցիչները...

Եթէ Եւրոպայի պետական գործերի ղեկավարները այսօր լինէին այնպիսի մարդիկ, ինչպէս դիցուք Գլադստոն, որի ամբողջ գործունէութիւնը որոշ սկզբունքների, մարդասիրական դաղափարների մի ամբողջ շարք է, մենք ականատես չէինք լինի այդ ասպիճանի եսամոլ, օպպոզիտիւնիզմի դագաթնակէտին հասած փոփոխամտութեան, ծիծաղելի այլակերպութեան։ Գլադստոն պաշտպան հանդիսացաւ ազգերի ազատութեան և Թշնամի Թիւրքական բռնութեան, թէ քսան տարի առաջ, երբ բուլգարական հարցն էր զբաղեցնում Եւրոպան, թէ այժմ, երբ հրապարակի վրա հայոց, կամ մակեդոնական հարցն է, առանց ենթարկելու այդ հարցերը Անգլիայի քաղաքական նեղ շահերին, ընթացիկ քաղաքական տեսակէտներին։

Կան հարցեր, դաղափարներ, ճշմարտութիւններ, որոնք անպայման բարձր պէտք է լինեն ինչպէս անհատների, այնպէս և ամբողջ պետութիւնների շահերից, և միայն այն պետական անձը, որ կարողանում է զոհել իր հայրենիքի, իր պետութեան նեղ շահերը այդ բարձր դաղափարներին, միայն նա, միայն այդպիսի պետական անձը կարող է ասել. „Ես գործեցի ինչպէս մարդ, ես վարվեցի այնպէս, ինչպէս պէտք է վարվի մարդը"։ Հակառակ դէպքում ամեն մի պետական գործող, ինչքան էլ բարձր լինի նրա դիրքը, երևան է գալիս իբրև խորամանկ դիպլոմատ, իբրև ճարպիկ փոփոխամիտ քաղաքագէտ, որի գործունէութեան հեռքերն անհետանում են իր կեանքի հետ միասին, առանց որ և է յարգանք յարուցանելու ապագայ սերունդների մէջ...

Տարաբաղդաբար, այդ տեսակ տիպ է ներկայացնում ժամանակակից Եւրոպական պետական գործողը.—բռնակալ, երբ այդպէս է պահանջում իր երկրի նեղ շահը, մարդասէր, երբ այդպէս է թելադրում նոյն շահը. այսօր պաշտպան ճնշված ազգերի և տանջված քրիստոնէութեան, վաղը կողմակից արևելեան բռնապետութեան և ընկեր մարդակեր բռնապետների։

Եւ ժամանակակից Եւրոպան երաղում է քաղաքակրթական դեր կատարել, երբ ամբողջապէս գտնվում է այդ տեսակ ղեկավարների, այդ տեսակ պետական առաջնորդների ճանկերում...

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ԳԱՒԱՌԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ

Մի շարք պետական կարգադրութիւններ եղան, որոնք աչքի առաջ ունեն լաւացնելու գաւառական ազգաբնակութեան վիճակը, սակայն գաւառը մնում է անօգնական և չէ կարողանում բարւոքել իր դրութիւնը։ Չը կան գաւառում ղեկավարող, նախաձեռնող, գործող հիմնարկութիւններ և խմբեր, որոնք օգնէին ժողովրդին կազմակերպելու բարեփոխութիւնների մի ամբողջ սիստեմ։

Յիշեցնենք մի քանի հանգամանքներ։ Կառավարութիւնը յատուկ օրէնքով արգելեց վաշխառութիւնը և սահմանեց, որ յայտնի տոկոսից բարձր ոչ ոք իրաւունք չունենայ փող տալ շահով։ Թիֆլիսի նահանգական վարչութիւնը՝ գիւղատնտեսական կատարելագործութիւններ մըցնելու նպատակով՝ կազմեց մի լայն ծրագիր և ժողովեց նշանաւոր դրամագլուխ։ Պետական բանկի բաժինները յայտարարեցին, որ նրանք տալիս են գիւղական ազգաբնակութեան էժան տոկոսով փոխառութիւն։ Պօստային վարչութիւնը բացեց իր գրասենեակները խնայողական դրամարկղների պաշտօն կատարելու նպատակով և այլն։

Սակայն գաւառական ազգաբնակութիւնը կամ բոլորովին հեռու մնաց այդ կարգադրութիւններից, կամ օգտվեց չատ սահմանափակ չափով։ «Մշակի» № 64-ում տպագրված «Անպատրաստ ժողովուրդ» վերնագրով գեղեցիկ յօդուածը մի նոր լուսաբանութիւն է մեր գաւառական անգործութեան և անփութութեան։

Այո, գաւառը անգործ է, անօգնական, զուրկ նախաձեռնող ոգուց, չը գիտէ ինքնուրոյն կերպով գործ կատարել, ինքնօգնութեան համար կազմակերպվել։ Իսկ տնտեսական կեանքի պայմանները օրէցօր դառնում են անտանելի և անմխիթար. հողը պակասել է և պակասում է՝ աճող ազգաբնակութեան հետ համեմատելով. հողը ուժասպառ է եղել և աւելի ծախս է պահանջում մշակութեան համար, քան առաջ։

Ցոյս կապել, որ միակ տեղական ինտելիգենցիան, ինքն իրան կազմակերպվելով, տեղական ղեկավարութեան պաշտօն կը ստանձնի, նշանակում է չատ հեռացնել ժողովրդին օգնելու գործը։ Տեղական վարչութիւնը չէ կարող այդպիսի բաղադրեալ և նոր գործ վերցնել իր վրա։ Հարկաւոր են այդտեղ յատուկ հիմնարկութիւններ, որոնք կանոնաւոր կերպով կազմակերպէին ժողովրդին օգնելու գործը։ Թիֆլիսի ազնուականութիւնը և կայսերական կովկասեան Գիւղատնտեսական ընկերութիւնը յարուցին նախ և առաջ զեմստվօի անհրաժեշտութեան խնդիրը և ապա մասնագիտական ընկերութիւնների և ընկերակցութիւնների հիմնելու խնդիրը։ Մեր երկրում այդ հիմնարկութիւնները հաստատելու հարցը անյետաձգելի հարցերից մէկն է ներկայումս։

Ն—ն

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՕՆ

Յունիսի 11-ին, հայոց դերասանական խմբի անդամները ներկայացրին Սունդուկեանցի «Պէպօ» կոմէդիան։ Պէպօյի դերը առաջին անգամ մեր բեմի վրա կատարեց պ. Միրաղեանը։ Մեր կարծիքով՝ Գ. Զմշկեանից յետոյ ամենալաւ Պէպօն՝ պ. Միրաղեանն է։ Պարոնի ձայնը, դրիմը, շարժուածքը՝ հագուստը չատ յարմար էին դալիս այդ դերին։ Առաջին և երրորդ գործողութեան մենաբանները նա կատարեց չատ գեղեցիկ, և արժանացաւ բուռն ծափահարութիւնների։ Մի փոքր աւելի որամութիւն և վիշտ այդ դերում, և յանձին պ. Միրաղեանի մենք կունենանք մի օրինակելի Պէպօ։ Կրկին անգամ ցաւում ենք, որ մի այդպիսի այժ, ինչպիսին է Միրաղեանը, թողել է

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

Վան, մայիսի 29-ին

Ձեզ ծանօթ է, որ վերջին քանի մը ամիսներու մէջ այստեղի ամենէն ուշագրաւ խնդիրը գիւղացի և քաղաքացի անհամար աղքատներու բաշխուող նպաստներն են։ Գիտէք թէ Անգլիայէն և Ամերիկայէն հասնող դրամական նուէրներն են, որ կը բաշխուին միսօիոնարուհի դօքտոր Բէմբլի ձեռքով, և թէ սա իրեն օժանդակ ունի տեղական մասնաժողով մը՝ որ երբեմն պատրիարքարանէն դրամ կընդունի յանուն աղքատաց։ Ասոնց գործառնութեանց մասին մի մի քանի ծանօթութիւններ հաղորդած ենք ձեզ, փետրվարի 1-ի նամակով։ Փետրվարէն յետոյ այս խնդիրը աւելի կենսական մի հարց կը դառնայ Վանի համար։ Այդ մասին մի քանի տեղեկութիւններ բաւական են մեր երկրի ընդհանուր վիճակին վրա դաղափար մը կազմելու համար։

Թէ գիւղերու և թէ քաղաքի մէջ ձմեռնային պաշարն սպառած լինելով՝ փետրվարին աւելի կը սուաբանայ խնդրարկու բազմութիւնը։ Յունվարի տեղատարափներ դադրելուն և ճամբայներ մի քիչ բացուելուն պէս գիւղերէն նոր բազմութիւն քաղաք կը խուժէ, կիսամերկ, ցրտահար, անօթի, կմախք դարձած. Աստուած գիտէ թէ քանիներ ալ ճամբան կը մնան։—Այլ ես կարելի չը լինիր մանաւորներու նպաստ տալ զատ. ուստի խնդրարկու բազմութիւն խումբերու կը բաժնուի և իւրաքանչիւր խումբին է, որ կը տրուի հարկ եղած խնամքը։ Խիզանի, Մոկսի և Նորդուզի դաւառներէն եկած խումբերը ամենէն արդահատելիներն էին։ Բռնի կրօնափոխութեանց և անլուր խժդժութեանց այնչափ յուզիչ, սրտաճմլիկ պատմութիւններ կը լսուէին ատոնցմէ, որ չատ երկար կը լինէր մէկ-մէկ յիշել։

Փետրվարի մէջ, 1884 անգլիական ոսկի ծախս կը լինի՝ գործ, հաց, անկողին և զգեստ մատակարարելու համար իբր 19,000 անձերու։ (Այս և յետագայ թուանշաններն առնուած են Միս Բէմբլի ամսեամիս պատրաստած տեղեկագրերէն, որ աչքի առաջ ունիմ այս նամակս գրած միջոցին. ասոնց մէջ չատ հետաքրքրական կարևոր մանրամասնութիւններ և ուրիշ տեղեկութիւններ ալ կան թէն, բայց ես հարկադրուած եմ միայ համառօտ քաղուած մը ընել)։ Չը կարենալով զամէնք գոհացնել, կը ստիպուին համոզել, յորդորել գեղացիներ, որ տեղերնին դառնան, խոստանալով նպաստ ուղարկել իրենց։ 700-ի չափ անձեր հաղիւ կը համոզուին ետ դառնալ, և տասնեակներով դարձողներու փոխարէն հարիւրաւոր նորեր կուգան։

Մարտի մէջ ամենէն չահեկան խնդիրը գեղացիք տեղերնին դարձնելու հարցն էր։ Տեղական կառավարութիւն և անգլիական հիւպատոսը ամեն կերպ յորդոր և խոստում ի գործ կը դնեն և կը յաջողին 3000-ի չափ գիւղացիներ ետ դարձնել։ Բայց ահա քաղաքէս 8—10 ժամ հեռաւորութեան վրա չատ գիւղեր նոր յարձակումներ կը կրեն. 5 գիւղ կը կողոպտուի, 34 անձինք կը սպանուին, չատեր ծանրապէս կը վիրաւորուին։ Բարեխնամ սուլթանի բարեկարգիչ կօմիսերը վաչտ մը զօրքով անձամբ գիւղերկերթայ կարգ վերահաստատելու և յանցաւորները պատժելու համար։ Այնուամենայն, որ յանցաւորները չեն պատահիր նորին վնեմափայլութեան... և զօրքերը քանի մը օր հայ գիւղերու մէջ ամենայն կերպ հիւրասիրուելէ զկնի ետ կը դառնան...

Նոր բազմութիւն ամեն կողմէ կուգայ դարձեալ և կը խնդրի արդէն եղածին վրա։ Սակայն Միս Բէմբլի ձեռք դրամն առատ չէ աճելու պէս. նուէրներու քանակութիւնն ըսկսեր է նուազիլ։ Պարսկաստանէն եկող կարաւաններու երթևեկն ալ ընդհատուած է, ուստի հում նիւթ կը պակսի գործարանին մէջ գործ և արտադրութիւն աւելցնելու համար։ Փուռերու համար ալ ցորեն կը պակսի, դրսէն բերել կարելի չէ, ապահովութիւն չը կայ. հացի գին զգալապէս վրա կը դնէ (չափը 35-էն 45-ի կը բարձրանայ և այսպէս ալ կը մնայ մինչև այժմ)։

Այս ամեն դժուարութեանց մէջ բնական էր, որ հարկադրուէին նպաստներու քանակը չափաւորել։ — Գործարանի և գիւղացի կարօտելոց նպաստ բաշխելու գործին մէջ աշխատող անձանց թիւը 1900-էն կիջեցնեն 1178-ի (այս թիւը կը ներկայացնէ 3400 հոգւոյ ապրուստ հոգացող անձ)։ Միայն աւուրչէքով ապրող ընտանիքներուն օրական կէս հացագին կը տրուի։ Հանդերձեղէնի բաշխումն ալ զգալապէս կը պակսեցուցուի (մարտի մէջ միայն 1318 անձ զգեստ կընդունին, 223 անգլիական ոսկւոյ արժողութեամբ)։ Վեց փուռերէն երկուքը կը դադրեցուցուի. քաղաքացի կարօտելոց կէսին հացի ռոճիկ կը դադարեցուցուի (այդու ամենայնիւ մարտի մէջ հաց ստացողներու թիւն է 7467, որոցմէ 2250 միայն գիւղացի են), ասկէ զատ 318 անգլիական ոսկի ալ կը ծախսուի ուրիշ

հայոց բեմը և նուիրված է միայն վրաց բեմին:

«Դիքօ» Տէր-Դաւթեանի մասին աւելորդ ենք համարում խօսել. հայ հասարակութիւնը հասկանում և ճանաչում է Դիքօին գլխաւորապէս չնորհիւ Տէր-Դաւթեանի: Մարդ նայելով «Դիքօ» Տէր-Դաւթեանի վրա, բոլորովին մոռանում է թէ բեմի վրա է նրան տեսնում: Աւելորդ չենք համարում յիշել այստեղ մօտաւորապէս այն խօսքերը, որ ասաց հանգուցեալ հռչակաւոր դերասան Թօսին պ. Տէր-Դաւթեանի մասին, երբ 1890 թ. տեսաւ նրան Դիքօի դերում. «Եթէ Տէր-Դաւթեանը հայ չը լինէր, այլ եւրօպացի, նա կունենար համաշխարհային հռչակ:»

Նոյնպէս լաւ էին օր. Վարդուհին Շուշանի և տ. Մելիքեանցը՝ Էփէմիայի դերերում: Այնքան աջողված չէր պ. Յարութիւնեանցի՝ Կակուլին: Պարտնը տեղ տեղ լաւ էր և այդ թոյլ է տալիս մեզ կարծել, որ եթէ սկզբից պարտնին յանձնված լինէր Կակուլու դերը (ափիշաներով Կակուլի դերը պիտի կատարէր պ. Արաքսեանը, բայց ներկայացման դիշերը, չը գիտենք ինչու, այս վերջինը միայն հանդիսական էր. դրա մասին խումբը պատիւ չարաւ հասարակութեան յայտնելու), և նա աւելի ժամանակ ունենար ուսումնասիրել, անշուշտ աւելի աջող Կակուլի կը լինէր:

Զիմզիմովի պատասխանատու դերը կատարեց սիրող Զմշկեան, որը, երևում էր, բաւական լաւ աշխատել էր Զիմզիմովի դերի վրա: Պարտնը տեղ տեղ լաւ էր. բայց ընդհանուրում՝ նա իսկական Զիմզիմով չէր, այլ շինովնիկ: Ալֆոնս Դոդեի մէկ գրուածքում ասված է՝ «Դուք վատ չէք ներկայացնում սէրը ու բարկութիւնը, բայց դուք ոչ սիրահարված էք և ոչ էլ բարկացած»: Նոյնը կարելի է ասել և սիրող Զմշկեանի մասին. նա ներկայացնում էր բարկութիւնը, սէրը, բայց չէր բարկանում, չէր սիրում: Պ. Զմշկեանը բեմի վրա իրան պահում է ազատ, դէմքը բաւական շարժուն է, և այդ բոլորը ցոյց է տալիս, որ նա կունենայ աջողութիւն, եթէ իր այժերը չը խնայի մեր աղքատ բեմի համար:

Վատ չէր պ. Մամիկոնեանը՝ Սամսոնի դերում: Զարմանում ենք, ինչու համար երկրորդ գործողութեան վերջում դուրս եկան երկու պարտներ, որոնք պիտի կատարէին «երկու այլ ծառաների, ֆրակով, սպիտակ ձեռնոցներով և առանց գլխարկի» («Պէպօ» երես 5) դերերը, բայց որոնք կատարեցին երկու բաւական անհնաւանդ, վատ հագնված և բաւական չատ ծիծաղող պարտների դերեր:

Թատրօնը լի էր:

Յ. Տ-Միք.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

«Դուրսեցիները», վէպ Շանթի, 1896, Թիֆլիս:

Հեղինակը ամբողջ գրքի մէջ չարունակ զբաղված է աղջիկների ու տղաների փոխադարձ սեռական ձգտումների պատմութեամբ, նրանց առանձնական կիրքը և հեշտանքը միայն երգելով: Նրա քաղցր ու հրապուրիչ ոճը հանում է գեղեցկութեան ու բեղմնաւորութեան գագաթնակէտին, երբ խօսքը գալիս է աղջիկների ու տղաների սիրային արկածներին... Ինչ բառեր, ինչ ելևէջներ, ինչ մանրակրկիտ, վավաշոտ նկարագրութիւններ:

Օրինակ, Բագրատը երեկոյեան պարապում է սենեակում. Գէորգը նոյն սենեակի մէջ աղատ կերպով համբուրվում է յոյն աղջկայ հետ: Իսկ հեղինակը անմահացնում է այդ տեսարանը հետեւեալ բառախաղով. «Բագրատը չի կրցաւ իր ծիծաղը զսպէ. անոնք ալ ծիծաղեցան. ու սիրուն պատկեր մը մէջտեղ ելաւ. ծիծաղկոտ համբուրվող զոյգ մը, որ ծիծաղկոտ դէմք մը ծիծաղով դուրս կը վազէր»:

Եթէ այդ բառախաղերը բանաստեղծական մարգարիտներ են և հէնց այդ պատճառով գիրքը լցրած է նրանցով, մենք ակամայ կարող ենք կասկածել, թէ արդեօք հէնց այդ «մարգարիտների» մէջ չէ պարունակվում գրուածքի ամբողջ միտքը: Մի տեղ հեղինակը աղջիկներից մէկի վերաբերմամբ հետեւեալ «անմեղ» բանաստեղծական ոճն է գործածում, «կը մտածէր. չէր մտածէր՝ կերազէր. ոչ, կը խաղար»: Արդեօք այս նոյն քնքոյշ զբաղմունքով չէ գրաւված նաև ինքը, պ. Շանթը իր գրուածքի մէջ:

Մի ուրիշ նկարագրութիւն. «Սիրուն, փոքրիկ վունջ մը: Երկու կամիլ արցունք, փոխուկ ժըպիտ մը, խորունկ նայուածք մը, քնքշութեամբ արտասանած երկու վանկ ձայն, որ իր անունը կը կազմէին և... և գողցուած համբուրիկ մը. փոքրիկ բանաստեղծական փնջիկ մը. անհուն երջանկութեան աշխարհ մը»:

Թէ ինչ նոյն իսկ բանաստեղծական անհեթեթութիւնների կարող է հասնել մի մարդ, որ աշխարհի մէջ միայն կրակոտ կրքեր և բորբոսած հեշտասիրութիւն է որոնում, այս կարելի է իմանալ Շանթի հետեւեալ նկարագրութիւնից. «Բայց ինչ ջուրի չերտ. ճերմակ կանացի կուրծք մը, որ անուշ կիրք մը կը յուզէ. կուրծք մը, որ ժանեակներու ծակտիկներէն երեսիդ կը ժպտի: Ու Բագրատ սկսաւ այդ վարթամ կուրծքը դիտել ու անրջել: Ա՛, ինչպէս երջանիկ կը լինէր, եթէ հիմա այդ տեսակ կուրծք մը իր թեւերուն մէջ, իր լանջին տակը զգար. և զոյգ մը աղջկային շրթունքներ (խեղճ բանաստեղծ) վարդի զոյգ թերթերու պէս իր շրթունքներուն վակչէին, ու ինքը ծծէր, ծծէր մեղուի մը պէս (խեղճ մարդ...) ամբողջ կենսունակութիւնը այդ վարդի թերթի շրթունքներուն, այդ չոլանէ լանջին. բոլոր քնքշանքը այդ աղջկային էութեան, բովանդակ բոցը այդ էդային ես-ին»:

Որքան էլ որ պ. Շանթ աշխատում է իր բանաստեղծական նկարագրութիւններին ու նմանութիւններին վեհ ընաւորութիւն տալ, բայց այդպիսի նկարագրութիւններն ու պատկերները մարդու հասարակ քաղաքավարութեան զգացմունքներն անգամ վիրաւորում են:

Կանգնեցէք, ընթերցող, մի այսպիսի տեսարանի առաջ. գործողներն են Բագրատ և Լուիզ: «Կեցէ՛ք. գտայ. բացականչեց երիտասարդը: Ոտքի թռոտը ոտքովը աղջկան ոտքերուն քովը հրեց, նստեցաւ վրան, գիրքը դրաւ աղջկան գիրկը ու իր արմունկներն ալ կրթնեցնելով անոր աղդրերուն.

—Դէ դուք փաթթեցէք (թելը) ըսաւ, ես ալ կը կարդամ»:

Սրա նման պատկերներն ու դրութիւնները հեղինակին երևի թուում է թէ բանաստեղծական են և «անուշ կիրք մը կը յուզեն» ընթերցողի մէջ. բայց մենք, ընթերցողներս կարող ենք ասել պ. Շանթին, որ «Դուրսեցիները» ոչ միայն որ և է կրթող, ազնուացնող ու բարձրացնող ազդեցութիւն չէ կարող անել, այլ չատ չատ գուցէ մէկի կամ երկուսի մէջ վավաշոտ կրքեր ու հակումներ զարթեցնէ: Եւ այդ պատանեական հիւանդոտ երևակայութեան զառանցանքը դուք, պ. Շանթ, առաջարկում էք մեր հասարակութեան ինչ մտքով, ինչ նպատակով: Պոլսի կեանքի մէջ դուք ուրիշ մի բան չը գտնք, բացի տափանքից: Բայց մոռանում էք, որ այդպիսի «անուշիկ» վէպեր կարող են ծլել և ծաղկել միայն Բոսֆորի ափերում խղճուկ կեանք քարշ տուող գրականութեան մէջ:

Եր. Ղազարեան

ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

«Բայաթի-Շիրազ» — Baiathi-Schiraz. աշխատութիւն Ն. Տիգրանեանցի:

Այս օրերս լոյս տեսաւ մեր հասարակութեան ծանօթ կոյր երաժիշտ Նիկողայոս Տիգրանեանցի երրորդ աշխատութիւնը—«Բայաթի-Շիրազ»: Սը-բանից մէկ տարի առաջ լոյս էր տեսել նոյն հեղինակի «Բայաթի-Քիւրդը»: Ինչպէս առաջինը, նոյնպէս և երկրորդը արևելեան կլասիքական եղանակներից են. կազմակերպութեան և ձևի կողմից երկուսն էլ շատ նման են մէկ մէկու, միայն երաժշտական բովանդակութեան կողմից՝ բոլորովին տարբեր: «Բայաթի-Քիւրդը» խրոխտ, հերոսական ընաւորութիւն ունի, իսկ «Բայաթի-Շիրազը» քնքոյշ, մելամաղձոտ, ազդեցիկ և հոգու խորքը թափանցող եղանակ է, որը հմտութեամբ պ. Տիգրանեանը չափի է վերածել, օժտել է եւրօպական ձայների ներդաշնակութեամբ, աշխատելով մի և նոյն ժամանակ հաստատիմ մնալ եղանակի ընաւորութեանը, որով նպաստել է աւելի աղդու կերպով արտայայտելու եղանակի ընաւորութիւնը: Մշակութեան կողմից աւելի աչքի են ընկնում վարիանտներից՝ երրորդ և չորրորդ երեսների ալէգրէտօները, հինգերորդ երեսի պիանիսիմօն, ութերորդ երեսը և վերջապէս գեատիը, որը աչքի է ընկնում իր հասարակ, բայց շատ ընտրոյ դահիրայի նման ակոմպանիմենտով:

Ամբողջ եղանակը պատկերացնում է մի ամփոփ երաժշտական պոէմա, վշտալից բոմանտիքական ընաւորութեամբ: Պ. Տիգրանեան ոչինչ չէ խնայում իր չքեղ հրատարակութիւնների համար. տպագրութիւնը գեղեցիկ է և մաքուր:

***

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ

—

Յունիսի 5-ին

Այստեղի հայ ուսուցիչները մարտ ամսից ռոճիկ չեն ստացել: Դժբաղդաբար, հոգաբարձութիւնն էլ ոչ միայն հոգ չէ տանում այդ մասին, այլ և տակաւին չէ ըմբռնել մի ամենատարրական ճշմարտութիւն՝ թէ ուսուցիչների ամբողջ տարվայ ռոճիկը պէտք է լրիւ վճարել, չը նայելով որ այդ բանը պաշտօնապէս էլ որոշված է: Այո՛, մեր «աղա հոգաբարձուները» դեռ չեն հասկացել իրանց այդ՝ բարոյական և նոյն իսկ օրինական պարտականութիւնը և ահա թէ ինչ են անում: Նրանք վերջին օրերս մի գրութիւն են ուղարկել Կաթուղիկոսին, որով նախ յիշեալ հարցի լուծումն են խնդրում, և ապա յայտնում են, որ իրանք հրաժարվում են հոգաբարձական պաշտօնից՝ քանի որ «հոգևոր կառավարութիւնն էլ կարող է վճարել ուսուցիչների մնացած ռոճիկը առաջիկայ ուսումնական տարվայ եկամուտներից»: Ուրեմն ուսուցիչները նորից պիտի սպասեն ոչ թէ մինչև սեպտեմբեր, այլ աւելի երկար: Բայց միթէ նրանք կարող են դիմանալ այդ զրկանքին, միթէ կարող են այդքան ժամանակ առանց փողի մնալ...: Չէ՞ որ նրանց էլ նիւթական միջոց է հարկաւոր առօրեայ ապրուստ հայթհայթելու համար: Արդեօք հոգաբարձութիւնը մի բօսդէ անգամ մտածել է այդ մասին... Ի հարկէ ոչ:

Բայց «լաւ է ուշ, քան երբէք», ասում է առածը: Թող ուրեմն «աղա հոգաբարձուները» ուշադրութեամբ կարդան «Մշակի» № 63-ի առաջնորդող յօդուածը և կատարեն իրանց պարտականութիւնը՝ այսինքն վճարեն ուսուցիչների ռոճիկը և յետոյ հրաժարվեն: Ուրիշ կերպ վարվելը՝ կը նշանակէ պարտաճանաչութեան զգացմունք չունենալ:

Քաղաքացի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ հաղորդում են, որ յունիսի 8-ին Վեհափառ Կաթողիկոսը Էջմիածնից գնաց Երևան, որտեղից մտադիր է ճանապարհ ընկնելու դէպի Սևանի վանքը:

—

Վիէննայի հայոց կօլօնիան ուղարկել է մի ցաւակցական հեռագիր Մուղաֆէդ-Էդդին Շահին, նրա հօր մահվան առիթով: «Հանդէս ամսօրեայ» ամսագիրը հաղորդում է, որ Այտընեան ստացել է հետեւեալ պատասխանը Սատրազամից: «Նորին Մեծութիւնը խորը կերպով զգացված է Հայկական Կօլօնիայի յայտնած ցաւակցական զգացմունքների համար սարսափելի կորուստի պատճառով: Շնորհակալութիւն է յայտնում այն ջերմ բարեմաղթութիւնների համար, որ Դուք ուղղում էք նրան իր թագաւորութեան բարգաւաճման համար»:

—

Լսում ենք, որ Վանի ռուսաց փոխ-հիւպատոսուած է գօքսոր Բէժբի խնամից ներքև և որ 250 աւելի հիւանդներ խնամած և առողջացուցած է ցարդ (կէսէն աւելի գեղացիներ): Թէև ասունցմէ միայն 60-ի չափ հիւանդներ միայն են, որ յատկապէս հիւանդանոցի համար վարձուած չէնքին մէջ խնամուեր են, բայց միւսներ իրենց տեղեր ընդունած են ամեն կերպ խնամք, դեղ. բժիշկ, մնունդ և այլն: 10 անձ միայն եղած է մեռնող:

Գիւղերու մէջ խաղաղութիւն տիրած կը թուի այժմ, միայն երբեմն-երբեմն սպանութիւններ կը լինին (քաղաքի մէջ կամ գիւղեր) որ կը վրդովեն միտքեր: Շուկան ալ բացուած է այս ամսուն, բայց առուտուր երբէք չը կայ գրեթէ:

Անցեալ չաբթուն 30-ի չափ գիւղացիներ արձակուեցան բանտէն, որք իբրև քաղաքական յանցաւոր բանտ էին երեք տարիէ ի վեր: Անցեալ տարի հրատարակուած ընդհանուր ներումին մասնական գործադրութիւնն էր այս: Հին բանտարկեալներէն գրեթէ մարդ չը մնար այլ ես բանտի մէջ: Կուսակալի քրիստոնեայ օգնականը և դատական քննիչը պաշտօնավարել սկսած են. իրենց կոչման կատարելապէս հաւատարիմ կը ցուցնեն զիրենք:...

Մ—դ

փուռերէ հայ տալու 7045 անձերու:—Նպաստներու այս նուազեցումը պատճառ կը լինի շատերու յուսահատութեան: Կին մը ինքզինք տանիքէն վար կը նետէ, կը մեռնի: Ուրիշ կին մը ինքզինք կը կախէ: Շատեր օրերով անօթի կը մնան. չատեր միայն բանջարեղէններով կը կերակրուին:

Վերջապէս նպաստներու բաշխումը զգալապէս պակսեցուելով հանդերձ, մարտի մէջ 19,250 անձ նպաստ ընդունած կը լինին դարձեալ, որոցմէ 10,867 անձ անոնք են, որք գործարանէն և փուռերէն կանոնաւորապէս գործ կամ հաց կը ստանան:

Բաց աստի մարտի մէջ 100 անգլիական ոսկի կը ղրկուի Արճէշ (Քաջբերունիք), այնտեղի 35 կողոպտուած գիւղերուն բաշխուելու համար. (Արճէշ Վանի շտեմարանն եղած է միշտ իր ցորենի առատութեամբ): 130 ոսկի Շատախ կը ղրկուի. 60 ալ այրեցաւէր Բօղազքէսէն և Ազարա գիւղերու բնակիչներուն, որք կարգ մը հալածուած եզիդիներու հետ չրջակայ գիւղեր ապաստաներ էին: Մոկսէն ալ 80 լեռնային գիւղերու կողմանէ պատգամաւորներ կուգան նպաստ տանելու, բայց գրեթէ ձեռնունայն կը դառնան:

Ապրիլի մէջ գիւղացիք տեղերնին դարձնելու ջանքեր ամենայն կերպ կը չարունակուին, բայց նոր բաղմութիւն մրջիւնի կարաւաններու պէս ամեն կողմէ կուգայ ու կուգայ՝ հակառակ ամեն արգելքի: Ամերիկացի միսիօնարաց, անգլիական հիւպատոսի և Օժանդակ Մասնաժողովի նստած խաղը կատարելապէս սնանցանելի կը դառնայ: Հոն կարելի է տեսնել չքաւորութեան և յետին ծայր թշուառութեան ամեն կերպ նմոյշներ: Միս-Բէմբլ կը հարկադրուի կառավարութենէն ոստիկան մը առնուլ խուժանը կառավարելու և իբրև դռնապահ հսկելու համար: Կառավարութենէն յատուկ ներկայացուցիչ մը ալ կը խնդրուի Միս-Բէմբլի գործառնութեանց հսկելու համար, առանց ձայն ունենալու...

Դրամի պակասութիւնը կը հարկադրէ գործն ամփոփել հեղհեղէ: Ապրիլի կէսէն սկսեալ գործադուլ կը տրուի գործարանին: Այդու ամենայնիւ 1150 բանուոր, այսինքն 3300 անձանց հացի պէտք հոգացողներ նպաստ կընդունին գործարանէն: 31 անգլիական ոսկի գործաւորաց աւուրչէք կը տրուի. 96 ոսկի ձրի կը բաշխուի. 323 անձերու ալ զգեստ կը տրուի. 1800 գիւղացի և 5230 քաղաքացի հաց կընդունին 4 փուռերէն՝ որոց ապրիլի ամսական ծախքը 689 ոսկի կը լինի: Ասունցմէ դատ 274 ոսկի ալ կը բաշխուի 4128 գեղացիներու:

Գալով մայիսին, դեռ այս ամսուան տեղեկագիրը դուրս եկած չէ, այնպէս որ ստոյգ թիւեր չունենք ի ձեռին: Այս յայտնի է սակայն, որ դրամի պակասութեան պատճառաւ գործն աւելի ամփոփուած է, գեղացիք տեղերնին կը դարձուցուին կառավարութեան ձեռօք: Քաղաքացիներէն ամենէ անճարներուն միայն է, որ կը շարունակուի հաց տրուիլ չորս փուռերէն. իսկ գիւղացւոց համար դրամ կուղարկուի իրենց տեղեր բաշխուելու համար: Այս կարգադրութիւնը թէև շատ հեռի է անհրաժեշտ պահանջները լրացնելէ, բայց գէթ աղդու միջոց մը եղած է գեղացւոց ցրուելուն: 150 ոսկի յատկացուած է միայն Բօղազքէսէն և Ազարա գիւղերուն համար. այդ գումարով այն գեղերու 130 տուն բնակիչներ պիտի վերաշինեն իրենց հրդեհուած կամ քարուքանդ եղած տներ, պիտի գնեն իրենց համար եզ, երկրագործական գործիքներ, ապրուստի տարրական պիտոյք և այլն և այլն: Իսկ թէ այս գեղացիք իրենց գիւղերուն մէջ հաստատուել կարինալէ վերջ ապահովութիւն ալ պիտի գտնեն, աշնանացանի հունձքեր իրենք պիտի կարենան վերցնել թէ ոչ, այդ Աստուած միայն գիտէ: Ինչ որ ալ լինի սակայն, որովհետև այլ ես դրսէն դրամ չի գար, ուստի որոշուած է նպաստներու բաշխման գործը հեղհեղէ աւելի ամփոփել և վերջացնել:

Այս ամեն յիշելէ վերջ, պէտք չէ մոռնալ նաև հիւանդանոցը, որ փետրվարէն ի վեր հաստատուած է գօքսոր Բէժբի խնամից ներքև և որ 250 աւելի հիւանդներ խնամած և առողջացուցած է ցարդ (կէսէն աւելի գեղացիներ): Թէև ասունցմէ միայն 60-ի չափ հիւանդներ միայն են, որ յատկապէս հիւանդանոցի համար վարձուած չէնքին մէջ խնամուեր են, բայց միւսներ իրենց տեղեր ընդունած են ամեն կերպ խնամք, դեղ. բժիշկ, մնունդ և այլն: 10 անձ միայն եղած է մեռնող:

տոը, որ միայն երկու օր էր՝ ինչ Թիֆլիս էր եկել, վերադարձաւ Վան։

—

«Рус. Вѣдомости» լրագիրը հաղորդում է, որ Մոսկվայի յայտնի բարերարուհի Իւլիա Բաղանովա ներկայացրել է յունիսի 4-ին Մոսկվայի համալսարանի վարչութեան 515,000 ռուբլի՝ յայտնելով որ նա նուիրում է այդ գումարը ականջի, կոկորդի և քթի հիւանդութիւնների կլինիկաներ շինելու, և այդ կլինիկաներում 25 անվճար մահճակալներ պահելու համար։

—

Կովկասեան կառավարչապետի դիւանատան դիրեկտոր Միցկեվիչ ամսիս 5-ին Մոսկվայից վերադարձաւ Թիֆլիս։

—

Ֆինանսների մինիստրութիւնը մտադիր է առաջիկայ աշնան յատուկ ժողով կազմել ծխատագործներից՝ քննելու և վերջնականապէս խմբագրելու ծխատի կանոնադրութիւնը։

—

Առաջիկայ յուլիսի 1-ից մի կարևոր պօստային նորութիւն կը մտցնուի Ռուսաստանի նշանաւոր քաղաքներում և գիւղերում։ Դրամական ծրարները, որոնք կը պարունակեն իրանց մէջ ոչ աւելի քան 50 ռուբլի գումար, կարող են, ստացողի ցանկութեամբ, բերվել տուն պօստային ծառայողի ձեռքով, փոխանակ միայն ծանուցագիր (повѣстка) բերելու, ինչպէս լինում է այժմ։

—

Երկրագործութեան մինիստրութեանը, մայրաքաղաքի լրագիրների խօսքով, առաջարկված է մի նոր ընկերութեան կանոնադրութեան նախագիծ՝ քրքումի պլանտացիաներ զարգացնելու համար Կովկասում, Բաղուի շրջաններում։

—

Յունիսի 11-ին, երեկոյեան, Թիֆլիսի կրեդիտային ընկերութեան արտակարգ ժողովում վճռվեց վարչութեան անդամներին ընկերութեան օգուտներից վարձատրութիւն տալու հարցը յետաձգել, մինչև անցեալ ընդհանուր ժողովի նախագահ Կ. Ալիխանովի արտասահմանից վերադառնալը։ Բացի դրանից, որոշվեց յունիսի 27-ին աճուրդի չը հանել այն կայքերը, որոնք վնասվել են հեղեղումներից։

—

Ելիսաւետպոլի նահանգապետ գեներալ-լեյտենանտ իշխան Նակաշիձէ, ինչպէս լսել է «Тифл. Листокъ» լրագիրը, նշանակվում է Ալեքսանդրեան կոմիտեի անդամ, իսկ Ելիսաւետպոլի նահանգապետ նշանակվում է իշխան Մէլիքով, որը Կովկասի կառավարչապետի առանձին յանձնարարութիւնների պաշտօնեայ է։

—

Այս ամառ Անդրկովկասը կայցելեն օտարազգի մի քանի թղթակիցներ, որոնք Մոսկվայի թագադրութեան հանդէսից յետոյ որոշել են պտոյտ անել Ռուսաստանում։ Անդրկովկաս են գալու նոյնպէս բելգիական ինժեներներ՝ արդիւնագործական նպատակներով։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Կ. Պոլսից մեզ գրում են, մայիսի 25-ից. «Թիւրք կառավարութիւնը Եմի-գուլէի Ազգային հիւանդանոցը ղրկել տուաւ դարմանելու համար փոլիս Մարգարը, զոր շաբաթ մը առաջ ծանրապէս վիրաւորեցին Գում-Գաբուի հրապարակին վրա»։

—

Անգլիական պարլամենտում, Բօքերտ Բեդ հարցրեց արտաքին գործերի քարտուղար Կըրզոնին՝ թէ ինչ միջոցներ է ձեռք առել անգլիական կառավարութիւնը, որպէս զի Հայաստանի կոտորածները և աւերումները չը կրկնվեն Կրետէ կղզում։ Կըրզոն պատասխանեց, որ կառավարութիւնը իր կողմից արել է Թիւրքիային առաջադրութիւններ, և տուել է խրատներ և ուրիշ հրահանգներ։ Բեդ պատասխանեց. «Ես ձեզ չը հարցրի թէ ինչ առաջադրութիւններ էք արել, այլ ինչ միջոցներ էք գործ դրել, որովհետև մենք այժմ, լորդ Սալսբրիի ճառից յետոյ, գիտենք, որ օտար մի պետութեան վերաբերութեամբ արած առաջադրութիւնները և յորդորները ոչ մի գործնական նշանակութիւն չունեն։ Այժմ յունիս ամիսն է, իսկ մենք մինչև այժմ չենք տեսել գործնական արդիւնք և բաւարար հետևանք այն առաջադրութիւններից, որ արվել էին դեռ դեկտեմբեր ամսին։»

—

Անգլիական «Daily News» լրագրի Բուդապեշտի թղթակիցը իր հեռագրի մէջ հետևեալ կերպով է խօսում կոմս Գոլուխովսկու ճառի այն կտորի մասին, որ Թիւրքիայի և Հայաստանի գործերին է վերաբերում։ «Խիստ և կարուկ լեզուով, որ մենք սովոր չենք լսել աւստրիական կառավարութիւնից, Գոլուխովսկի չեշտեց Թիւրքիայի անգործութիւնը և անընդունակութիւնը։ Կայսր Ֆրանց Յովսէփը յոյսը կտրելու վրա է՝ Թիւրքիայի վերաբերութեամբ։ Կոմսը յայտնեց, որ Թիւրքիան կարօտ է մարդկանց, որոնք իրագործէին բէֆորմները, որ մինչև այժմ մնացել են մեռած տառեր։ Նա խիստ բառերով նկարագրեց Հայաստանում տեղի ունեցած կոտորածները և սարսափները և յայտնեց, որ նրանք մի արատ են 19-րդ դարի պատմութեան համար։ Կոմսը պարզելով, որ երեք պետութիւնների՝ այն է Անգլիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի մէջ ծագեցին վտանգաւոր տարաձայնութիւններ, Աւստրիան վերցրեց իր վրա նախաձեռնութիւն՝ խառնակութիւնների առաջն առնել և ապահովել խաղաղութիւնը։ Թիւրքիային կարողութիւն է տրված ցոյց տալ իր կենսունակութիւնը, մտցնելով երկրի մէջ բարեփոխութիւններ։ Այլապէս Թիւրքիայի բարեկամները, որոնց թւում և Աւստրիան, կը հեռանան խպառներից»։ Ընթերցողը տեսնում է, որ Ռուսաց գործակալութիւնը բոլորովին ուրիշ կերպ էր հաղորդել Գոլուխովսկու ճառի բովանդակութիւնը, քան թէ հաղորդում է անգլիական լրագիրը։

—

Կ. Պոլսից հեռագրում են. «Վանի հայոց եպիսկոպոսը մօտերս հրաւիրել է վալիի ուշադրութիւնը մահմեդականների զրգռված վիճակի վրա և երկիւղ է յայտնել, որ կարող են խառնութիւններ ծագել։ Ուրիշ տեղերից ևս հաղորդում են զրգռված տրամադրութեան մասին։ Երկիւղ են կրում, որ Վանի դէպքերը կը յուզեն կրքերը և ուրիշ տեղերում։ Բ. Դուռը խիստ կերպով հրաման է տուել Համիդէի հեծելազօրքին՝ չը հեռանալ իրանց տեղերից»։

—

Վանի դէպքերի մասին Ռուսաց հեռագրական գործակալութիւնը հետևեալ մանրամասն տեղեկութիւններ է հաղորդում յունիսի 5/17-ից. Կ. Պոլսից. «Վանի վալի Նազիմ-փաշայից և վերաբերական յանձնաժողովի նախագահ Սաադէդին փաշայից Բ. Դուռը ստացել է այսօր հեռագիր երեք օր առաջ Վանում տեղի ունեցած դէպքերի մասին։ Այդ հեռագրի համաձայն, մի հայ աղջկայ ձերբակալումը, որի մօտ կային յեղափոխական թերթեր, յուզմունք առաջ բերեց հայերի մէջ և նրանք սկսեցին իրանց մտերից դնդակներ արձակել թիւրքաց պահապան զօրքի վրա։ Տները և խանութները փակվեցին. հայերի և մուսուլմանների մէջ տեղի ունեցան կռիւներ։ Նազիմ-փաշան և Սաադէդին-փաշան, կամենալով աւելի խոշոր ընդհարումների առաջն առնել, արգելեցին զինուորներին մտնել հայերի տները։ Յիսուն հոգի սպանվեցին։ Հայերի մօտ գտան շատ հրացաններ և նիքելաջրած գործիքներ։ Այդպիսի դէպքերի առաջն առնելու համար, Բ. Դուռը հեռագրով հրամանագրեց բոլոր վարչական և զինուորական իշխանութիւններին նախազգուշական հարկաւոր միջոցներ ձեռք առնել»։

—

«Daily News» լրագրի ասելով՝ Լօնդօնի թիւրքաց դեսպանը յունիսի 12-ին անսպասելի այցելութիւն արաւ լորդ Սալսբրիին և երկար խօսակցութիւն ունեցաւ նրա հետ։

—

Անգլիական դեսպան Ֆիլիպ Կերրի առողջացել է։ Նա նախատեսնում է Արևելքում զանազան արկածներ, սակայն մտադիր չէ վերադառնալ Կ. Պոլիս, մինչև չը լրանայ նրա արձակուրդի ժամանակամիջոցը։

ՆԱՄԱԿ ԹԻԻՐՔԻԱՅԻՑ

—

Կ. Պոլիս, մայիսի 28-ին

Ոստիկանութիւնը, որ այնքան վայնասուն հանեց հանդանակութիւններուն առթիւ, կը կարծէ արդեօք թէ հայ յեղափոխականներ են նաև այն չէրքէզները, որոնք չորս հինգ օր առաջ Եալովայի ճամբուն վրա առևանգեցին պօլսեցի հայ վաճառական Տիգրան Բարաղամեանին աղջիկը և ֆրանսացի տիկին Պոանդօն, պալատական դայեակ։ Աւազակները երկուքին համար 25,000 ոսկի կը պահանջեն և հինգ օր պայմանաժամ տուած են. մինչև այսօր տակաւին յայտնի չէ մեզ թէ ինչ կերպով վերջացած է խնդիրը։

Եալովա Պոլիսէն օրուան մը հեռաւորութեամբ Մարմարայի արևելեան եղերքը մեծ գիւղ մըն է, ուր կը գտնուին կայսերական գանձին պատկանած ջերմուկներ։ Ամէն տարի, այս եղանակին մանաւանդ, մեծահարուստ մարդիկ կերթան հոն ջուրերը մտնելու։ Ուշագրաւ է, որ այդ առևանգումը կայսերական կալուածներու վրա տեղի կունենայ։ Ես նկատել կուտամ միայն նոյն իսկ կայսերական կալուածներու վրա տիրող «ապահովութեան և անդորրութեան» ստատիճանը.—անդորրութիւն՝ որ ամէն օր կը հաչակուի տեղական թերթերու միջոցաւ և ծիծաղելի յանկերգի մը պէս շարունակ կը կրկնուի։

Հայ-լուսաւորչական, հայ-բողոքական ու հայ-կաթոլիկ հիմակ շատ ներող են իրարու նկատմամբ. ոչ ոք կը յիշէ այլ ևս աստուածաբանական հին նախապաշարումները, որոնք մօրացած ճահիճի մը պէս ապականութիւն կը սփռէին երբեմն աղգին մէջ։ Հայ մամուլը պատեհութիւն ունեցաւ քանի մը անգամներ արձանագրել հայ-բողոքականներու և հայ-կաթոլիկներու ազնիւ ձեռնտուութիւնները։ Սակայն կղերական կուսակցութիւնը ահա սկսած կերեի իր սև կնգուղը երերցնել և այս օրինակելի ներդաշնակութեան մէջ խանդարում մը ստեղծելու աշխատիլ։

Աղարեան պատրիարք ամբաստանուած է ուսանող հայ կրօնական թերթի մը կողմէն իբր հայերը կաթոլիկութեան առաջնորդող։ Ինչ որ գրեցինք Աղարեանի համար այս էջերուն մէջ, բառ մը պիտի չը փոխենք։ Միայն հարցում մը կընենք.—Աւելի աղէկ պիտի սեպէին կղերականները, եթէ Աղարեան թիւրք կառավարութեան դիրքը նեռուէր։ Թող լռէ Կ. Վ. և ազգային ներդաշնակութիւնը քակելու վատութիւնը չը գործէ։ Եթէ նպաստաւոր դիրքի մը մէջ ըլլար Կ. Վ. արդեօք պիտի չառաջարկէր ինքն ալ Աղարեան պատրիարքին և հայ-կաթոլիկներուն՝ հաւատքնին փոխելու։ Կղերականներու դատանքին մէկ մասը կը կազմէ պրոպագանդան (հաւատքի տարածումը), այդ կղերականը ըլլայ Աղարեան, ըլլայ Հ. Շարմրիթան, ըլլայ Կ. Վ. անուն ճամբատակ մը։ Ներելի է անուանարկել Աղարեան պատրիարքը, պրոպագանդա ըրած ըլլալուն համար, երբ միւս կողմէ հայկական դասը սկսեց պաշտպանել քաջութեամբ։

Պ—ի

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԻՑ

—

Պոսթոն, յունիսի 1-ին

Օրուան խնդիրը Թբրլը է։ Սուլթան Համիդի ճաշասրահին երբեմնի գիւցազնը իր հայրենիքը դառնալէ ի վեր թէքսասի մի խաղաղ անկիւնը դեղջկական կեանք մը կը վարէր ազատ իր բազմահոգ աշխատութիւններէն (!)։ Բայց այդ հանդիստը երկար չը տևեց. միսիոնարը և իրենց բարեկամը ատիթէն օգուտ քաղել ուզելով ըսկսան գանգատներ տեղալ Ուաշինկթընի և խընդրել, որ այս կարևոր ժամանակին մի կարող և պատուաբեր դեսպան ուղարկուի Կ. Պոլիս։ Նշանաւոր եկեղեցականներու և աշխարհականներու մի պատգամաւորութիւն ներկայացաւ նախագահին անցեալ շաբթու. երկար բանակցութենէ վերջ Թբրլը Ուաշինկթընէն կանչուեցաւ։ Օրաթերթերու ըսածին նայելով թէքսասցի զիւանագէտը կամբաստանուի իբր անկարող և յամառ, կըսուի թէ իր կոչտ վարմունքը և լեզուն ոչ մի շրջանի մէջ յարգանք չեն ներշնչեր դէպի մեծ հասարակապետութիւնը և այլն։ Անցեալ շաբթու միսիոնարական շաբաթաթերթեր ժխտեցին այդ լուրը. իրենք շատ գոհ են Թբրլի գործունէութենէն ըսին, բայց կը փափաքին, որ աւելի կարող և յարմար անձ մը ստանձնէ այդ փափուկ և պատասխանատու պաշտօնը, մանաւանդ որ Միացեալ Նահանգաց կառավարութիւնը կը պատրաստուի աւելի կորովկ և պատուաբեր ընթացք մը բռնել միսիոնարաց պաշտպանութեան և անցեալ տարուան վնասներու հատուցման խնդիրներու մէջ։

Այս աղմուկներու միջոցին վրա հասաւ Մելքոն Կէճէեան կոչուած երիտասարդ մը, որ տարիի մը չափ առաջ Անտիոք ձերբակալուեցաւ և Հալէպի մէջ մահուան դատապարտուեցաւ, յետոյ Ամերիկեան կառավարութեան միջամտութեամբ Պոլիս բերուելով ազատ թողուեցաւ պայմանաւ, որ Ամերիկա դառնայ։ Կէճէեանի խնդիրը ժամանակին բաւական յուզում պատճառեց այստեղ. շատեր գիտեն որ Թբրլը խոստացաւ հայ երիտասարդին ձեռքէն առնուած 900 ոսկին առնել Թուրք կառավարութենէն և իրեն վերադարձնել, խոստում մը, որ շատ շուտ մոռցուած է դեսպանին ծերացած յիշողութեան շնորհիւ։

Երևակայեցէք մեր քաղաքագէտին զայրոյթը, երբ ամեն տեղ կը խօսին սուլթանին քով կերած ճաշերու օրակին և քանակին վրա, երբ ամեն կողմէ կը յարձակին իր վրա, նոյն իսկ իր դատեր ստացած թրքական չքանչանի հաշիները չը մոռնալով։ Իրաւունք չունի՞ ծերունի թէքսասցին անիծել հայերն ալ, իրենց խնդիրն ալ։

Կէճէեանին հետ Լօնդոնէն հոս հասաւ Զէյթունի պաշտպան հերոսներէն մին, Ամերիկայի հայերու ծանօթ երիտասարդ մը։ Ընդունելութիւնը շատ խանդավառ էր. յուսանք թէ մեր ժողովուրդը տակաւ առ տակաւ պիտի սկսի ճանչնալ և գնահատել իր բարեկամները։

Տեղական թերթերէն մի քանին կրկին գրեցին Զէյթունի դէպքերու նկարագրութիւնը, կռիւներու մասնակցողի տուած տեղեկութիւններէն օգտվելով։

«Forum» ամսաթերթը յունիսի թւոյն մէջ հրատարակեց մի գեղեցիկ յօդուած, Մանկասարեանի գրչէն՝ հայկական խնդրոյ վրա։ Ամերիկայի մէջ շատ քիչ երեցեր են այդ լրջութիւնը և ճշդութիւն ունեցող յօդուածներ։ Պ. Մանկասարեան ստուդիա Ամերիկայի հայոց ամենէն կարող անդրիագէտն է, իր լեզուն շատ կորովալի, ճիշդ, յատակ և հրապուրիչ է միանգամայն։ Ցաւալի որ այս կարգի անձինք շատ ուշ և շատ քիչ անգամ հրապարակ կուգան հասարակաց կարծիքին որոշ և ճշմարիտ ուղղութիւն մը տալու, մինչ իրենց շահերու միայն սիրահար մի կարգ ազէտ անձինք հայկական խնդիր անուան տակ ծանուցումներով, հակասական դաղափարներով և յիմար առաջարկութիւններով ամեն տեսակ կը մրոտեն Ամերիկայի օրաթերթերը։

Մէկ-երկու օրէն ձեզ կուղարկեմ Մանկասարեանի յօդուածի թարգմանութիւնը, թէև փափաքելի կարելի չը լինի հայերէնի մէջ պահել բնագրին գեղեցկութիւն և կորով։

Արմէն

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Թաւրիզ, մայիսի 29-ին

Մայիսի 25-ին, շաբաթ երեկոյեան, հեռագիրը հաղորդեց Մուզաֆէրէդդին Շահի թէհրան ժամանելը։ Ըստ սովորութեան Շահը այդ օրը ժամանել և դիշերել է թէհրանին կից Եաֆտաբադ աւանում, որպէս զի երկուշաբթի օրը դահը բարձրանայ հանդիսաւոր կերպով։ Իսկ 27-ին, երկուշաբթի օրը, ժամը 11-ին Ալաղափուից (մի արքունական շէնք է Թաւրիզում, ուր տեղի է ունենում սովորաբար Նոռուզ օրերի սալամը) 103 թնդանօթի հարուածները հաղորդեցին Շահնշահի հանդիսաւոր մուտքը իր արքունիքը և դահը բարձրելը։ Պարսից թագաւորների սովորութեան համեմատ՝ նոր Շահը առաջին անգամ արքայական դահը բարձրանալու ժամանակ պէտք է հագած լինի իր նշանաւոր պապերից մինի ծիրանի հանդերձը, զարդարված լինի ամենախանկագին զոհարներով և չքանչաններով, և զինված լինի ամրակուռ մի թանկագին սրով։ Ենթադրում ենք, որ նոր Շահն էլ կատարած կը լինի այդ բոլոր սովորութիւնները։ Այդ մի և նոյն օրվայ դիշերը Ալաղափիում մեծ քանակութեամբ հրաձգութիւն եղաւ երբեմնակի թնդանօթաձգութեան հետ միասին։

Մայիսի 28-ին, ժամը մօտ 4-ին մեր քաղաքը ժամանեց գլխաւոր մուշտէիդ Սիրզայ-Ահմադ-աղան, որը Քալբալայում ուսումնասիրում էր Ղուրանը և մուշտէիդութեան վերաբերեալ գործերն ու օրէնքները։ Հանդիսաւոր մուտք գործեց մուշտէիդ աղան. բազմաթիւ զոհեր կարվեցան նրա ոտքերի տակ՝ ի նշան հնազանդութեան։ Շատ հայեր ընդառաջ էին գնացել և սիրալիր ընդու-

նելութիւն էին գտել: Այս գիշեր էլ հրաձգութիւն եղաւ:

Հօր մահից յետոյ մուշտէիդուլթեան պաշտօնը ժամանակաւորապէս վարում էր Միրզա-Ահմադալայի փոքր եղբայրը, որ չափազանց հայասէր լինելով, այս մի քանի ամսվայ ընթացքում շարունակ պաշտպանել է հայոց դատը և քարոզել է պարսիկներին սիրով վարվել հայերի հետ: Ցոյս կայ, որ ներկայ մուշտէիդը նոյնպէս հոգ կը տանէ պարսկահպատակ և մանաւանդ Թաւրիզի հայերի ապահովութեան համար:

Այսօր մուշտէիդը դուրս եկաւ չուկաները պատելու. պատաւոր հաջիները զոհեր էին կարում նրա ոտների տակ, իսկ ժողովուրդը չէր դադարում սալաւոր կանչելուց: Երիտասարդ է նա, վառվռուն դէմքով և լաւ կազմուածքով. տեսքին նայելով՝ հազիւ 30 տարեկան լինի:

Մուշաֆէրէդդին Շահը արտօնութիւն է չնորհել Թիւրքահայ տառապեալներին ազատ մուտք գործել Պարսկաստան, իսկ կառավարիչներին հրամայել է լաւ պահպանել նրանց:

Արշակունի

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Լորդ Բօզբերին անգլիական լրագիրների մէջ տպել է մի նամակ, որով հերքում է այն լուրը, թէ իբր ինքն մտադիր է թողնել ազատամիտ կուսակցութեան ղեկավարութիւնը:

—Բէլգրադից հեռագրում են «Kölnische Zeitung» լրագրին, որ սերբիական կառավարութիւնը դիպլոմատիական ճանապարհով խնդրել է՝ ճանաչել Թիւրքիայում ապրող սերբերին իբրև մի առանձին ազգայնութիւն, այն հիման վրա, որ այդ իրաւունքը վայելում են բուլգարները, որոնք Թիւրքիայում ունեն իրանց սեպհական եկեղեցիները:

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՈԴ, 10 յունիսի: Ցուցահանդէսում և քաղաքում բացված է էլէկտրական ճանապարհի երթեւեկութիւնը:

Յունիսի երկրորդ կէսին ապասվում է ցուցահանդէսում Մեծ Իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչ:

ՕԴԷՍԱ, 10 յունիսի: Յունիսի 9-ին ժամանեց Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլաեվիչ: Հեծելազօրը տեսնելուց յետոյ, երեկոյեան, Նորին Բարձրութիւնը ճանապարհ է ընկնում Տիրասպոլ և Բէնդերի:

Կ. ՊՕԼԻՍ, 10 յունիսի: Աւստրո-Ունգարական դեսպանը հանդէս եկաւ առաջարկութիւններով, որոնց նպատակն է խաղաղացնել Կրէտէ կղզին: Բարձր Կալիցէն պահանջում է քրիստոնեայ նահանգապետ նշանակել, հալէպեան դաշնագիրը վերականգնել և ազգային ժողով նշանակել: Բոլոր դեսպանները հրահանգ ստացան պաշտպանել Կալիցէի առաջարկութիւնը:

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՈԴ, 11 յունիսի: Կիրակի, ցուցահանդէսում կային 9,778 այցելողներ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 յունիսի: Գատչինօից Պետերբուրգ ժամանեց այրի կայսրուհին Մեծ Իշխան Միխայիլ Ալէքսանդրովիչի և Մեծ Իշխանուհի Օլգա Ալէքսանդրովնայի հետ: Թագուհին, որպէս չէֆ գվարդիական էկիպաժի, եկաւ տեսնելու «Բենդա» կրէյսերը: Նաւը տեսնելուց յետոյ Թագուհին իր Օգոստափառ երեխաների՝ Միխայիլ Ալէքսանդրովիչի և Օլգա Ալէքսանդրովնայի հետ երկաթուղով վերադարձաւ Գատչինա:

ՍՕՖԻԱ, 11 յունիսի: Յունիսի 9-ին ժողով կայացաւ, որ կազմել էր մակեդոնական կենտրոնական մասնաժողովը: Ժողովը բազմամարդ չէր:

ՊԷԿԻՆ, 11 յունիսի: Յունիսի 8-ին վախճանվեց մայր-կայսրուհին:

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ
Յունիսի 11-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արժէ	94	ր.	05 կ.
Բերլինի վրա 100 մարկ	45	»	$92\frac{5}{8}$ »
Պարիզի վրա 100 ֆրանկ	37	»	30 »
Ոսկի — — արժէ	7	»	50 »
Մաքսային կուպոններ —	149	»	— »
Բօրսային դիսկոնտ —	5	»	7% »
4% պետական րէնտա	99	»	— »
Ներքին 5% առաջին փոխառութ.	$286\frac{1}{4}$	»	— »
— — երկրորդ —	250	»	— »
5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	210	»	— »
5% պետական երկաթուղ. րէնտա	$100\frac{1}{2}$		— »
4% նեղքին փոխառութեան	$98\frac{5}{8}$		— »
$4\frac{1}{2}$% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	101	»	— »
Ազն. կալ. Գետ. բանկի խաղարկութ.	—	»	— »
$4\frac{1}{2}$% Վկայակ. գիւղ. հող. բանկի	101	»	— »
Փոխ. կրեդիտ. ընկերութ. մտաս.	—	»	— »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ ընկերութեան օբլիգացիաներ.	$101\frac{3}{8}$		—
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ	101	»	—
Օդէսայի — —	100	»	— »
Թիֆլիսի — —	$98\frac{1}{4}$	»	— »
Թիֆլիսի կալ. բանկի 6% —	—	»	— »
5% — — —	—	»	— »
Քութայիսի — 6%	—	»	— »
5% — — —	—	»	— »

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, սիֆիլիս և վեներական հիւանդութիւնների:

Դ. Գ. ՁԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Կին-բժիշկ ԴՈՒՆԱՅԵՎԱ-ԲՈՒԴԵՆԿՈ—10—11 ժ. կանանց և երեխ. հ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍՈՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ:

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՆԵԱՆ—12—1 ժ. ներքին, երեխայոց և նեարդային հ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ:

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—$1\frac{1}{2}$ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

ՊՐՕՏԱՍՈՎԻՉ—5—6 ժ. երեքշ. հինգշ. և շաբաթ:

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՆԵԱՆ—5—6 ժ. երկուշաբթի չորեքշաբթի և ուրբաթ:

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—6—7 ժ. Սիֆիլիսի, մէզի և սեռական օրգանների հ. ներքին և մարթի հ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խլխի, արեան, կաթի և այլն:

Վճար 50 կ.: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

Կազանի Համալսարանի 4-րդ կուրսի ՄԻ ՈՒՍԱՆՈՂ ցանկանում է դասեր ունենալ չափաւոր գնով: Պատրաստ է և ամառանոց գնալ: Հասցէն. Вера, Ольгинская ул. д. Теріева, Кв. Доктора Кананова. (№ 68) 1—4

ԹԱՐԳՄԱՆՎՈՒՄ Է
ԱԼՖՕՆՍ ԴՕԴԷԻ
„ИСТОРІЯ ОДНОГО РЕБЕНКА"
(№ 68) 1—2

Թարգմանում եմ
Է. ԴԻԼԼՕՆԻ
„ԳՈՐԾԵՐԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ" զրուածքը:
Ե. Թ.
(№ 68) 1—2

ՄՕՍԿՎԱ ԵԿՈՂՆԵՐԻ
ՀԱՄԱՐ
քաղաքի կենտրոնում, Բոլշայա Դմիտրովկա (Большая Дмитровка) փողոցի վրա տրվում են
„ՎԵՐԱԼ"
Շքեղ կերպով կահաւորված ՀԱՄԱՐՆԵՐ: Բնակվողների համար կան ամեն տեսակ յարմարութիւններ՝ ՏԵԼԵՖՕՆ, ՎԱՆՆԱ: ստացվում են ՀԱՅՈՑ և ՌՈՒՍԱՑ լրագիրներ և այլն: ԳՆԵՐԸ ՁԱՓԱՒՈՐ ԵՆ:
6—20 (№ 62) Բ. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ

ԿՎԱՐՏԻՐԱ
ս 5-ти комнатахъ, со всѣми удобствами, стеклянною галлереею и водопроводомъ, отдается. Куки, Семеновская улица, д. № 16.
(№ 63) 4—4

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՐԷԴԻՏԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

յայտնում է ի գիտութիւն ընկերութեան պ.պ. անդամների, որ լիազօրների յունիսի 9-ին կայացած արտակարգ ժողովի որոշման համեմատ ընտրողական ցուցակները վաւերացրած են և նոր լիազօրների ընտրութիւնը երեք տարի ժամանակով (1896 թ. յուլիսի 12-ից մինչև 1899 թուի յուլիսի 12-ը) նշանակուած է: Առաջին կարգի համար՝ սոյն յունիսի 15-ին, շաբաթ, երեկոյեան 8 ժամին, ընկերութեան վարչութեան տանը: Երկրորդ կարգի համար՝ կիրակի, յունիսի 16-ին, առաւօտեան 11 ժամին, Թիֆլիսի ժողովարանի դահլիճում: Երրորդ կարգի համար՝ կիրակի, յունիսի 23-ին, առաւօտեան 10 ժամին, նոյնպէս Թիֆլիսի ժողովարանի դահլիճում:

Կանոնադրութեան 64-րորդ յօդուածի հիման վրա ընկերութեան այն անդամները՝ թէ արական և թէ իգական սեռի, որոնք չեն ցանկանում ներկայ լինել ընտրողական ժողովին, կարող են հաւատարմագրով իրանց ձայնը յանձնել Ընկերութեան մի այլ անդամի, բայց ներկայ եղողներից ոչ ոք երկու հաւատարմագրից աւելի չէ կարող ունենալ: Իսկ երեխաների, անչափահասների, ցնորվածների և ընդհանրապէս խնամակալութեան ներքոյ գտնվող անձինքների փոխարէն ձայնի իրաւունքը Ընկերութեան ընտրողական ժողովներում պատկանում է նրանց խնամակալներին կամ հոգաբարձուներին: Մի և նոյն անշարժ կալուածքի համասէրերից միայն մէկն իրաւունք ունի ներկայ լինել ընտրողական ժողովում և այն՝ մի ձայնով. այս իրաւունքը պատկանում է յատկապէս այն համատիրոջ, որին մնացեալներն ընդհանուր հաւատարմագրի են տալիս. իսկ եթէ այսպիսի հաւատարմագրի չը կայ՝ այն համատիրոջ, որ վերջին անգամ վճարել է Ընկերութեան հասանելիք կիսամեայ վճարը: Մի քանի տներ գրաւ դրած տէրերը մի ձայն ունեն միայն, ուրիշ անդամների հետ հաւասարապէս: Ընկերութեան իրաքանչիւր անդամ, որ ցանկանում է ընտրողական ժողովներին մասնակցել, վարչութիւնից պէտք է ստանայ առանձին տոմսակ, ուր նշանակվում է նրա անունը: Առանց տոմսակի ոչ ոք ներս չէ թողնվում ժողովի դահլիճը:

Վերոգրեալի համաձայն ընտրողական ժողովներին մասնակցելու հաւատարմագրերը պէտք է ներկայացվեն՝ առաջին կարգի համար՝ ոչ աւելի ուշ, քան չորեքշաբթի, յունիսի 12-ին: Երկրորդ կարգի համար՝ ոչ աւելի ուշ, քան հինգշաբթի, յունիսի 13-ին, մինչև 3 ժամը կէսօրից յետոյ, և երրորդ կարգի համար՝ հինգշաբթի, յունիսի 20-ին, ոչ ուշ, քան 3 ժամ կէսօրից յետոյ:

1—1

ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՅԻ ՀԱՄԱՐ

հարկաւոր են՝ հայոց և ռուսաց լեզուների, հայոց և ռուսաց պատմութեան, Հայաստանի, Ռուսաստանի և ընդհանուր աշխարհագրութեան, հայոց մատենագրութեան, թուաբանութեան, բնական գիտութիւնների և պատրաստական դասարաններում աւանդվող առարկաների ուսուցիչներ:

Դիմել Երևան հետեւեալ հասցէով.—Попечителю Арм. Дух. Семинаріи присяжному повѣренному Григорію Христофоровичу Теръ-Хачатурову.

(№ 68) 1—3 Տեսուչ Տ. Յովհաննիսեան

ԹԻՖԼԻՍ-ԿԱՐՍԻ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ

ինութեան աշխատութիւնների ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է, որ այս 1896 թուի յուլիսի 5-ին, ժամը 12-ին, նրա բնակարանում, որ գտնվում է Թիֆլիսում, Բարիչևվսկի փողոցում, տուն № 26, նշանակված է մրցում՝ եղենեայ գերաններին մատակարարութեան. այդ գերանները, որոնք հարկաւոր են սալայատակելու համար, պէտք է լինեն զանազան մեծութիւնների և ընդամենը 19,400 խորանարդ ֆուտ:

Այդ մատակարարութեան տէխնիկական պայմանները և կոնդիցիաները կարելի է տեսնել ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺՆՈՒՄ առաւօտեան 9 ժամից մինչև 12 ժամը, ամեն օր, բացի տօն օրերից. նրանք կարող են ուղարկվել ըստ ցանկութեան և պոստով: Յայտարարութիւնները պէտք է տրվեն անձամբ կամ ուղարկվեն պոստով, կնքված ծրարներով՝ Թիֆլիս-Կարսի երկաթուղու չինութեան աշխատութիւնների վարչութեան ճիշդ հասցէով, և ունենան այս մակագիրը՝ «къ конкуренціи на поставку мостовыхъ брусьевъ»: Յայտարարութիւնների մէջ պէտք է ճիշդ նշանակված լինեն—նիւթի քանակութիւնը, մատակարարութեան ժամանակամիջոցը և տեղը, գինը՝ թէ վագոնների մէջ լցնելու վարձի հետ միասին, թէ առանց դրան:

Յայտարարութիւնները ներկայացնելիս վարչութեան դրամարկղի մէջ պէտք է նախապէս մտցնվի գրաւական՝ մատակարարութեան արժէքի 5%-ի քանակութեամբ. իսկ մատակարարութեան չափի համեմատ յետ կը պահվի ամեն մի վճարումից 10% վերջնական գրաւականի համար, մինչև որ կը կազմվի գրաւականի ընդհանուր գումարը, որը կազմում է ամբողջ մատակարարութեան արժէքի 10%-ը:

(№ 67) 2—3

ՀԵՂԵՂՆԵՐԻՑ ՎՆԱՍՎԱԾՆԵՐԻՆ ՕԳՆԵԼՈՒ

Դումայի ԳՈՐԾԱԴՐԻՉ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ նախագահը՝ Դամաձայն յանձնաժողովի 1896 թուի յունիսի 5-ի վճռի, սրանով տեղեկացնում է ի գիտութիւն ընդհանուրի, որ այն անձինք, որոնք ազատվել են հեղեղումից, կարող են դիմել Յանձնաժողովին անձնական բացատրութիւնների և յայտարարութիւնների համար, շաբաթը մի անգամ, շաբաթ օրերը, երեկոյեան 8 ժամից, Քաղաքային վարչութեան տունը. իսկ Յանձնաժողովին տրվելիք գրաւոր խնդիրքները կարող են տալ Քաղաքային Քարտուղարին, ամեն օր, մինչև ցերեկվայ 2 ժամը, Քաղաքային վարչութեան շինութեան մէջ: (№ 67) 2—5

ՔԻՄԻԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ
ՐԻՍ-ԳՈՒՏՄԱՆԻ
(Տնային գործածութեան համար)

ՀՆԴԿԱԿԱՆ ՄԻՇՈՒՆԱ, այն է հաստատ մահ մկներին, խլուրդներին և ուրիշ կրծողներին: Այս միջոցը արտաքսում է այդ կենդանիներին գլխաւորապէս բնակարաններից, այնպէս որ նրանք չեն մնում գետնայարկի տակ և չեն տարածում զարշահոտութիւն:

ՄԼԱԿՆԵՐԻ ԴԷՄ ՀԵՂՈՒԿ, ոչնչացնում է նրանց ընդմիշտ: Նա շատ հաճելի հոտ ունի և բիծ չէ թողնում ճերմակեղէնի, կօշիկների և կարասիքի վրա: Փոշիացնելով նրան, սենեակի օդին հաճելի թարմութիւն են հաղորդում և միաժամանակ հալածում են ցեցը, ճանճը և մոծակները:

ՓՈՇԻ՝ ՄԻՋԱՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ, ամենայարմար միջոցն է բոլոր միջատները և նրանց սաղմերը բոլորովին ոչնչացնելու համար: Այդ փոշին անփոխարինելի է լուսեր և մլակներ ոչնչացնելու համար անկողիններում, ներքնակներում, թաղիքով պատած փայտային պատերում: Ոչնչացնելով ցեցը և չունենալով նաֆթալինի անհաճոյ հոտը, այս փոշին բոլորովին փոխարինում է նրան. դրա համար հարկաւորութիւն չը կայ ամառը տալ մուշտակները և ուրիշ մորթեղէն իրերը պահելու համար: Փոշու ազդեցութիւնը, երբ նրան գործադրում են ամեն տեսակ միջատների, մրջիւնների դէմ—դրեթէ վայրկենական է—հետևանքը զարմանալի:

(№ 23) 13—50

Дозволено цензурою, Тифлисъ, 12 Іюня 1896 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.